ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2015- 08.07/347
08.07.2015թ.

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ
Վ. Շահինյանին

Հարգելի պարոն Շահինյան,

2015 թվականի հուլիսի 6-ին կազմակերպություն է դիմել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Ելենա Օվսյաննիկովայի ամուսինը, Ռուսաստանի Դաշնության քաղաքացի, ազգությամբ հայ Հարություն Մուրադյանը: Կազմակերպությանն ուղղված դիմումում և դրան կից ներկայացված դեպքի նկարագրության փաստաթղթում Հ. Մուրադյանը հայտնել է, որ ինքը և կինը 2015 թվականի հունվար ամսից իրենց երեխաների հետ տեղափոխվել են Հայաստանի Հանրապետություն:

2015 թվականի հունիսի 23-ի երեկոյան Հ. Մուրադյանը և Ե. Օվսյաննիկովան մասնակցել են էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ կազմակերպված հավաքին: Հավաքի ընթացքում Ե. Օվսյաննիկովան մոտեցել է կանգնած ոստիկաններին, դիմելով նրանց ասել, որ «եթե ես մեկ անգամ տան հրաման գնալ առաջ և ուժ կիրառել խաղաղ ցուցարարների դեմ, որոնք հեռախոսներից, տեսախցիկներից և ջրի շշերից բացի չունեն ոչինչ, նրանք լսեն առաջին հերթին ոչ թե ղեկավարության հրահանգներն, այլ ինքներն իրենց, և հիշեն, որ պողոտայում հավաքվածների մեջ կան իրենց հարևանները, բարեկամները, ընկերները»:

Ըստ Հ. Մուրադյանի կողմից ներկայացված դեպքի նկարագրության՝ 2015 թվականի հունիսի 24-ին, նախ կեսօրին, ապա երեկոյան Ե. Օվսյաննիկովան կրկին գնացել է Բաղրամյան պողոտա: Կեսօրին ոստիկանության աշխատակիցներ հավաքի վայրում գրեթե չեն եղել, իսկ երեկոյան, կրկին գնալով Բաղրամյան պողոտա և բարձրանալով մինչև պատնեշ, Ե. Օվսյաննիկովան ընկերուհու հետ հայտնաբերել է, որ ոստիկանությունը այնտեղ է՝ նույն տղաները սաղավարտներով և վահաններով: Ե. Օվսյաննիկովան դիմել է ոստիկաններին, ասելով, որ «/…/ այսպես չէին պայմանավորվել, և նրանք չպետք է լինեին այնտեղ, ինչպես նաև, որ բոլորը խաղաղ է, իսկ նրանք կանգնած են իրենց վահաններով ու մահակներով»: Այս պահին նրան մոտեցել է մի անձ, ով խնդրել է հեռանալ, քանի որ նա, իբր թե խանգարել է ոստիկանության աշխատանքին: Ե. Օվսյանիիկովան հարցրել է, թե

ինչպես է խանգարում, տղամարդը պատասխանել է, որ Ե. Օվսյաննիկովան խանգարում է նրանց կատարել իրենց աշխատանքը ու պարտականությունը: Հետագայում Հ. Մուրադյանը և նրա կինն իմացել են, որ այդ անձը եղել է Թևան Պողոսյանը:

Ե. Օվսյաննիկովան շարունակել է մնալ այդ տարածքում, և մի քանի րոպե անց ոստիկանության շղթայի ետնից դուրս է եկել Հունան Պողոսյանը և ոչ այնքան քաղաքավարի խնդրել է Ե. Օվսյաննիկովային հեռանալ, նշելով, որ նա խանգարում է ոստիկանության աշխատանքին: Ե. Օվսյաննիկովան կրկին հարցրել է, թե ինչպե՞ս է խանգարում, որին ի պատասխան Հ. Պողոսյանը պատասխանել է, որ «Ասեմ ձեզ, որ մեր բոլոր ոստիկանները սեքսուալապես ցանկասեր են (сексуально озабоченные), իսկ դուք քայլում եք նրանց առջև»: Երբ Ե. Օվսյաննիկովան նշել է, որ այդ արտահայտությամբ Հ. Պողոսյանը վիրավորել է ինչպես իրեն, այնպես էլ բոլոր կանգնած ոստիկաններին, Հ. Պողոսյանը պատասխանել է, որ եթե նա ինքնակամ չհեռանա ոստիկանության շղթայի և «բարիկադների» միջև ընկած տարածքից, նրանք միջոցներ կգտնեն իրեն հեռացնելու համար:

Այնուհետև Ե. Օվսյաննիկովային մոտեցել են պատգամավորներ Թևան Պողոսյանը ու Էդմոն Մարուքյանը, անձանոթ անձ, ով ներկայացել է որպես թոշակի անցած գնդապետ և խնդրել հեռանալ, իսկ ապա մեղադրել տարբեր սադրանքների մեջ: Երբ Ե. Օվսյաննիկովան հայտնել է, որ հավաքին մասնակցում է նույն պատճառով, ինչ մյուսները, նրանք չեն բավարարվել և շարունակ հարցրել են, թե ինչ է անում նա հավաքի վայրում և որն է նրա նպատակը:

Այնուհետև Ե. Օվսյաննիկովան նստել է ասֆալտին: Այլ անձանց, հավանաբար՝ լրագրողների հետ ասֆալտին նստած վիճակում գտնելու ժամանակ Ե. Օվսյաննիկովային մոտեցել է ահռելի մարմնով մի տղամարդ և պահանջել ցույց տալ իր վկայականը: Ե. Օվսյաննիկովան այդ տղամարդուն խնդրել է ներկայանալ և իր վկայականը ցույց տալ, սակայն անձանոթը պնդել է, որ իրավունք ունի վկայական ցույց չտալ: Մի քանի րոպե անձ հիշյալ տղամարդը վերադարձել է այլ անձանց հետ, որոնցից մեկը կոպտորեն բռնել է նրա ձեռքը և սկսել քաշել: Ե. Օվսյաննիկովան, չդիմանալով ճնշմանը, հեռացել է ոստիկանության շղթայի և «բարիկադների» միջև ընկած տարածքից, սակայն շարունակել է մնալ Բաղրամյան պողոտայում:

Կատարվածից հետո Ե. Օվսյաննիկովայի վերաբերյալ տարբեր նյութեր են հրապարակվել ՋԼՄ տարբեր կայքերում, ինչպես նաև սոցիալական ցանցերում:

Մասնավորապես, ՀՀ ոստիկանության պետի խորհրդական Նարեկ Մալյանն իր ֆեյսբուքյան էջում հրապարակել է մի տեսանյութ, որտեղ տեսագրված է Ե. Օվսյաննիկովայի և պատգամավոր Թ. Պողոսյանի խոսակցությունն այն մեկնաբանություններով, որ նա ուկրաինական սադրիչ է, իսկ Է. Մարուքյանն իր մեկնաբանություններում պնդել է, որ նա հարբած է եղել:

2015 թվականի հունիսի 25-ին ՀՀ ոստիկանության պետի խորհրդական Ն. Մալյանն իր ֆեյսբուքյան էջում հրապարակել է մի նոր հոդված, որտեղ կեղծ տեղեկություններ է ներկայացրել Ե. Օվսյաննիկովայի մասին՝ նրան ներկայացնելով որպես Սիրիայի,

Ուկրաինայի, Վրաստանի անկարգությունների մասնակից և հայտնել, որ նա վերապատրաստում է անցել Թուրքիայում: Բացի այդ, Ն. Մայյանը պնդել է, որ Ե. Օվսյաննիկովան սեռական հարաբերություն ունենալու առաջարկ է արել Բաղրամյան պողոտայում գտնվող և ծառայություն իրականացնող բոլոր ոստիկաններին:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են», իսկ 14-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից»: ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածն արգելք է սահմանում անձին խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելու համար:

ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածն ամրագրում է անձի՝ խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը սահմանում է, որ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»: Հիշյալ իրավունքը բխում է կոնվենցիայի 11-րդ հոդածի բովանդակությունից:

«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք սույն օրենքով սահմանված իրենց լիազորություններն իրականացնելիս պարտավոր են ղեկավարվել համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան»: Սույն օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է հավաքի մասնակիցների շրջանակները, որի 1-ին մասի համաձայն՝ «Հավաքներին մասնակցելու իրավունք ունի յուրաքանչյուր ոք (Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք)», իսկ 2-րդ մասը հստակ սահամանում է, որ «Ոչ ոք իրավունք չունի պարտադրելու անձին մասնակցել որևէ հավաքի կամ խոչընդոտել նրա մասնակցությունը որևէ հավաքի»:

Այսպիսով, հաշվի առնելով ողջ վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթներով և Ձեր լիազորություններով, դիմում եմ Ձեզ՝ պահանջելով դեպքին առնչվող ՀՀ ոստիկանության աշխատակիցների գործողություններին իրավական գնահատական տալու համար ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ քրեական գործ հարուցելու, մեղավորներին հայտնաբերելու, պատասխանատվության ենթարկելու և Ելենա Օվսյաննիկովայի խախտված իրավունքները վերականգնելու ուղղությամբ:

Կից ներկայացնում եմ՝

- Հ. Մուրադյանի՝ կազմակերպությանն ուղղված դիմումի և դեպքի նկարագրության փաստաթղթի պատճենը,
- Հ. Մուրադյանի կողմից կազմակերպություն ներկայացված տեսանյութերի, ֆեյսբուքյան էջերի քաղվածքները՝ էլեկտրոնային կրիչով:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Տ. Սիրադեղյան
tsiradeghyan@hcav.am

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակի նախագահ
Արթուր Սաքունցին

ԴԻՄՈՒՄ

«06» 07 2015թ.

1. Անուն, ազգանուն, հայրանուն Մուրադյան Հասմիկ Գևորգի
2. Ծննդյան թիվ 22.09.1975թ.
3. Ծննդավայրը ք. Երևան
4. Քաղաքացիությունը ՀՀ.
5. Կրթությունը թարգմանչուհի
6. Զբաղմունքի տեսակը, աշխատանքի վայրը և պաշտոնը կենսաբանություն, գնումներ, ՀՀ.
7. Հասցե 0001, ք. Երևան, Հերացու փող. 26 տ., բն. 54
8. Հեռախոսի համարը 055765437
9. Ընտանեկան կարգավիճակը հիմնականում
10. Քանի՞ անգամ եք մեզ դիմել, ինչ հարցով առաջին
11. Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ 2015թ. հունիսի 23-ին, կիրակի ՀՀ. քաղաքացի Հայկազ Օհանջանյանի նամակներից մեկ. ֆեյսբուքյան դեմ կայանալիք հանդիպում, որի ընթացքում պարբերաբար սպառնալիքներ կարդալով նրա հասցեին պարբերվել է նաև հեղինակի ազգությամբ, ինչպես նաև հանդիսանալ ատելության խոսքի կրող հեռուստաալիքի ներկայացուցիչ և հանդիսանալ մեղադրյալ: Հիշյալ անձանց պարբերաբար սպառնալիք ստանալու և սպանության ենթարկելու մտադրությամբ նրա հասցեին. հրապարակային ելույթներ կատարող պետական ծառայողներ են եղել: Նրան ասելիք չունենալու պատճառով, նամակում հայտնում է կիրակի հանդիսացող միջոցառման և ատելության կոչերի մասին և այդ պատճառով նրան ներգրավում ենք վերլուծության:

Ի՞նչ կարգով եք ցանկանում, որ մեր կազմակերպությունը զբաղվի Ձեր գործով՝
Պատրաստել համապատասխան գրություն՝ տեղեկատվության հարցում, դիմում, հայցադիմում, հաղորդում
Իրականացնել շահերի դատական պաշտպանություն և դատարանում հանդես գալ որպես ներկայացուցիչ
որպես ներկայացուցիչ հանդես գալ քրեական գործի նախաքննության փուլում

Օգտվելով ՀՀ Սահմանադրության 38, 39 և 40 հոդ. հռչակված իրավունքներից՝ խնդրում եմ օգնել ինձ իմ խախտված իրավունքների վերականգնման հարցում: Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը.

1.
2.
3 .
4.

Դիմում վերցնողի _____ ստորագրությունը _____ անուն, ազգանունը

Դիմողի՝ _____ ստորագրությունը _____ անուն, ազգանունը

Տեղեկացնում եմ, որ իրավախորհրդատուի կողմից ինձ բացատրվել են իմ իրավունքներն ու պարտականությունները, իմ գործողություններից բխող հնարավոր ռիսկերը, և արդյունքները:

Ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ ես ներկայացնում եմ իմ համաձայնությունը:

Դիմողի՝ _____ ստորագրությունը _____ անուն, ազգանունը

Նրանից հետո, երբ հունիսի 23 առավոտյանոստիկանությունը ցրեց մարդկանց, որոնք մասնակցում էին Բաղրամյան պողոտայի խաղաղ ցույցին, ինձ և կնոջց, ինչպես բոլոր երևանցիներին սարսափելի զարմացրեր ջրցանների կիրառումը, ինչպես նաև այն թե ինչպես էին իրականացվում ձերբակալումները Բաղրամյան պողոտայի վրա և Օպերային հարակից Ազատության հրապարակի վրա, երբ ոստիկանությունը քշում էր ցուցարարներին:Այդ իրադարձություններին մի քանի ժամ անց, կինս՝ Ելենա Օվսյաննիկովան, իմացավ, որ իր ընկերներից մեկը՝ Դավիդ Սելիմյանը, ձերբակալվածներից է:Չկար որևէ տեղեկատվություն, թե որ բաժնում է գտնվում կամ ինչում է մեղադրվում նա:Լենան դիմեց ոստիկաններին, որոնք հերթափոխի էին Օպերայի մոտ, թե ինչպես և որտեղ կարելի է ստանալ տեղեկատվություն ձերբակալվածների մասին:Նրան ասացին, որ նման տեղեկություն հնարավոր է ստանալ Վարդանանց փողոցի վրա գտնվող բաժնում:Հենց այնտեղ ուղղորդվեց նա հեծանիվով ցերեկը ժամը երեքին:Վարդանանցի բաժնում նրան ասացին, որ այդ անունով ձերբակալված չկա և թե որտեղ կարելի է նրա փնտրել, նրանք տեղյակ չեն. տեղեկություն կամ որևէ ցուցակներ ձերբակալվածների մասին չկան:Այն հարցին, թե ինչպես նա կարող է գտնել իր ընկերոջը, նրան խորհուրդ տվեցին դիմել կենտրոնական բաժին՝ Դինամո մարզադաշտի մոտ: Այնտեղ նույնը կրկնվեց, սակայն, այնտեղից նրան ուղղարկեցին Խանջյան փողոցի քննչական կոմիտե:

Բաժին հասնելուն պես, կիս պատրաստվում էր հեծանիվը կանգառել և այն ապրացնել ցանկապատին:Այդ պահին իրեն մոտենում է մոտ 45տարեկան կամ ավելի մեծ տարիքի մի տղամարդ, ասելով, թե այդտեղ կայանելը արգելված է, քանի որ դա որստիկանության բաժին է:Կինս պատասխանեց, որ տեղյակ է, որ ոստիկանության բաժին է, քանի որ հենց այնտեղ է եկել: Այնուհետև կինս հարցրեց, թե ով է այդ տղամարդը, որն արգելում է իրեն հեծանիվը կանգնեցնել:Պարզվեց, որ դա ոստիկան էր քաղաքացիական զգեստով: Երկրորդ անգամ խնդրելուց հետո նա ցույց տվեց իր վկայականը, և համոզվելով, որ շփվում է ոստիկանի հետ, հենեց հեծանիվը ձողին:Մտնելով բաժին և տալով նույն հարցերը, Ելենան չստացավ որևէ պարզաբանող պատասխան:Սակայն, բարեբախտաբար, միջանցքով անցնում է մի մարդ, բավականին հանդիսավոր մոխրագույն կոստյումով և, նկատելով Լենային, հարցնում է, թե ով է նա և ինչ է անում, ինչպես նաև ավելիացնում, որ կարող է տեղեկություն իմանալ մեր ձերբակալված ընկերոջ մասին և խնդրում, որպեսզի նա սպասի 15 րոպե: Այնուհետև, դուրս է գալիս փողոց, որտեղ, ինչպես մենք արդեն գիտենք (այդ պահին կինս չգիտեր ոստիկանության որևէ մի ղեկավարին) տալիս էր հարցազրույց Վլադիմիր Գասպարյանը:Ի վերջո, մոտ 40 րոպե սպասելուց հետո, իրեն ասացին, որ Դավիդը բաժնում է Մալաթիայում, խնդրեցին, որպեսզի կրկին սպասի, հարցրեցին, կցանկանա արդյոք նրան տեսնել և տաս րոպե հետո ասացին, որ Դավիդին և մնացածներին արդեն ազատել են: Արդեն ժամը 17:00 էր:

Լենան զազում մեր և Դավիդի ընդհանուր ընկերոջը, որպեսզի տեղեկացնի այդ բարի լուրի մասին և գնում է տուն: Ավարտելով բոլոր գործերը, իր և մեր յոթ տարեկան որդու հետ Ազատության հրապարակում էինք, ուր նշանակված էր նոր հավաք:Որոշ ժամանակ անց, մարդիկ շարժվեցին դեպի Բաղրամյան: Հայտնվելով Բաղրամյանի վրա, մենք հանդիպեցինք մի քանի ընկերների, և գնացինքներքևԲաղրամյանով: Ինչ-որպահին, երբ սերտ հարևանությամբ էինք ոստիկանությունից, կինս գնաց ոստիկանության մոտ և սկսեց խոսել նրանց հետ: Այստեղ, պետք է նշեմ, որ կինս շատ երկար ժամանակ պացիֆիստ է, դրանով իսկ չի ընդունում բռնության ցանկացած ձև և գտնում է, որ ոչ մի քաղաքական, աշխարհաքաղաքական և այլ խնդիրները չարժեն և

չպետք է կիրառեն ու արդարացվեն ուժի միջոցով: Նա սկսեց դիմել կանգնած ոստիկաններին, որ եթե ես մեկ անգամ տան հրաման գնալ առաջ և ուժ կիրառեն խաղաղ ցուցարարների դեմ, որոնք հեռախոսներից, տեսախցիկներից և ջրի շշերից բացի չունեն ոչինչ, նրանք լսեն առաջին հերթին ոչ թե ղեկավարության հրահանգներն այլ ինքներն իրենց, և հիշեն, որ պողոտայում հավաքվածների մեջ կան իրենց հարևանները, բարեկամները, ընկերները: Ամեն անգամ, երբ ամբոխի և ոստիկանության միջև լարվածությունը աճում էր, նա հետ էր գնում և կրկնում այս խոսքերը, կրկին ու կրկին, կոչանելով չկիրառել ռետինեմահակները: Դաբողոքի երկրորդգիշեր էր, նոչոքչգիտեր, թեինչովայնկավարտվի:Մանավանդ, ինչ-որպահին ոստիկանները դուրս եկան առաջ մետաղական վահաններով և փակ սաղավարտներով: Սա արդեն կեսգիշերից հետո էր,կամ առավոտյան մեկին:

Որոշ ժամանակ անց, մենք պայմանավորվեցինք, որ ես տուն պետք է գնամ, քանի որ երեխաները տանը մենակ են, և կրտսերս շատ փոքր է, իսկ Լենան կմնա պողոտայում, հատկապես երբ մենք հանդիպեցինք ընկերներին, և ես հանգիստ էի դրա մասին. Այդ գիշեր նա մնաց գրեթե մինչև չորսն անց կես և միայն հասկանալով, որ չեն քշելու մարդկանց, գնաց տուն:

Կեսօրին, վերցնելով մեր որդուն մանկապարտեզից, կինս կրկինԲաղրամյանի վրա էր: Մարդիկ ավելի քիչ էին, բայց չկար ոստիկանություն: Սա շատ ուրախալի էր:Երեկոյան մենք վերադարձանք այնտեղ միասին, այնուհետև գնացինք ընթրելու, որից հետո նա, միանալով ընկերներին, առանց մեզ գնաց Բաղրամյան: Հասնելով Բաղրամյանի սկիզբ նա իր ընկերուհու հետ որոշեցին գնալ դեպի վեր տեսնել, թե ինչ է կատարվում: Բարձրանալով մինչև պատնեշ, նրանք զարմանքով և վախով հայտնաբերեցին, որ ոստիկանությունը այնտեղ է՝ նույն տղաները սաղավարտներով և վահաններով: Գալով ավելի մոտ նա հիշեց նրանցից շատերին: Առաջին բանը, որ նա ասաց, դիմելով ոստիկաններին, ովքեր կանգնած էին, այն էր, որ նրանք այսպես չէին պայմանավորվել, և նրանք չպետք է լինեին այնտեղ, ինչպես նաև, որ բողոքը խաղաղ է, իսկ նրանք կանգնած են իրենց վահաններով ում ահակներով: նայսպահիննրան մոտենումէ մի մարդ, որը խնդրում է հեռանալ, քանի որ նա, իբր թե խանգարում է ոստիկանության աշխատանքը:Կինս հարցնումէ. «Ինչպես եմ ես խանգարում: Իդեպ, եսպարզապեսխոսում եմ, ինչը արգելված չէ»: Տզամարդը պատասխանում է - «Ոչ, դուքխանգարում եք նրանցկատարել իրենց աշխատանքըուպարտականությունը: Ես ձեզ մարդկայնորեն խնդրում եմ գնալ այստեղից»:Այնուհետև, Լենան և ես իմացանք, որ դա եղել է ԹնանՊողոսյանը: Կինս ասում է նս մեկ անգամ, որ չի գնա, բացատրելով, որ նա համարում է իր մարդկային պարտքը մնալ այնտեղ:Մի քանի րոպե անց ոստիկանության ետնից դուրս է գալիս Հունան Պողոսյանը և ոչ այնքան քաղաքավարի խնդրում է Լենային հեռանալ, և ասում, որ ինքը խանգարում է ոստիկանության աշխատանքը: Լենան կրկին հարցնում է, թե ինչպե՞ս է խանգարում և լսում է հետևյալ պատասխանը. «Ասեմ ձեզ, որ մեր բոլոր ոստիկանները սեքսուալապես ցանկասեր են (сексуально озабоченные), իսկ դուք քայլում եք նրանց առջև»: Ինչպես կինս ասաց, մի քանի վայրկյան նա անկարող էր խոսել զարմանքից, այս խոսքերը լսեց մի մարդուց, որը երեք աստղ ուներ նրա ուսադիրի վրա:

Նա պատասխանեց, թե քիչ է որ նա իրեն վիրավորել է, ավելին, նա նաև վիրավորեց բոլոր կանգնած որստիկաններին, որոնք հավանաբար կամ ամուսնացած են կամ ունեն ընկերուհիներ:Ինչպես նա բնավ կարող է նման բաներ ասել:Ինչին Հունան Պողոսյանը պատասխանեց, որ եթե նա ինքնակամ չհեռանա, ապա նրանք կգտնեն միջոցներ իրեն հեռացնելու այնտեղից (խոսքը գնում է ոստիկանության և բարիկադների տարածքի

մասին): Դրանից հետո նրան սկսեցին հերթով մոտենալ պատգամավորներ Թնան Պողոսյանը և Էդմոն Մարուքյան, խնդրելով, որպեսզի նա հեռանա: Լենաի այն հարցին, թե ինչու պետք է նա հեռանա, սկզբում նրան պատասխանեցին, որ նա խանգարում է ոստիկանության աշխատանքին, այնուհետև սկսեցին նրան մեղադրել տարբեր սադրանքների մեջ:Հայտնվում է ևս մեկ անհատ, խոսում է Թնան Պողոսյանի հետ, մոտենում է Լենային նույն խնդրանքներով և մեղադրանքներով: Խոսում է շատ կտրուկ և կոպիտ: Ինքըներկայացավ որպես թոշակի անված գնդապետ: Կինս չհիշեց նրա անունը, բայց հասցրեց նրան նկարել:Կրկին հնչում են սադրիչ և սադրանք բառերը իր հասցեին:Նա ստիպված նստում է ասֆալտին, քանզի նա հասկանում է, որ այս մարդիկ չեն ցանկանում նրան լսել, իրենց խնդիրն է նրան հեռացնել ոստիկանության և բարիկադների միջև ընկած տարածքից:Նրանք սկսեցին ասել, որ այնտեղ են գտնվում, որպեսզի թույլ չտան սադրանք կամ բռնություն, իսկ քանի որ Լենան սադրիչ է, ապա խնդրում են, որպեսզի նա հեռանա: Նույն հարցը տալիս են բազում անգամներ՝ ինչ է նա անում անյտեղ և որն է նրա նպատակը: Նրա պատասխանը, այսինքն որ նա այնտեղ է գտնվում նույն պատճառով, ինչ մնացած բոլոր բողոքին մասնակցող մարդիկ:Այսքանը նրանց չի բավարարում, և նրանք նույն հարցերն են տալիս. 'Ինչ է ձեզ հարկավոր այստեղ, որն է ձեր նպատակը: Դուք սադրիչ եք: Արդյունքում իրավիճակը լարվում է, ինչ-որ պահին լրագրողները նկարահանում են նրա խոսակցությունը Թնան Պողոսյանի և Էդմոն Մարուքյանի հետ: Նա ստիպված նստում է ասֆալտին, որպեսզի նրան չհեռացնեն ցույցի առաջին գծից:Նրանք պնդում են, որ այդ հատվածում կարող են ներկա գտնվել միայն պատգամավորներ, նշանավոր դեմքեր և ԶԼՄ, չնայած այնտեղ գտնվում էին մարդիկ, որոնք չէին պատկանում որևէ խմբին: Կնոջս հարցնում են, աղրյոք նա լրագրող է:Նա պատասխանում է, որ ոչ, բայց կարող է հեշտությամբ տեսանյութ պատրաստել տեղի ունեցածի մասին, ինչը ճիշտ է, քանի որ կնոջս շրջապատում կան լրագրողներ ինչպես Մոսկվայում, այնպես էլ Երևանում:Ի վերջո, նա կրկին նստում է ասֆալտին, արդեն այլ երիտասարդների հետ, հավանաբար, լրագորդների, և այդ պահին իր վերևում հայտնվեց մի ահռելի մարմնով տղամարդ, որը պահանջեց, որպեսզի Լենան ցույց տա իր վկայականը:Լենան հարցնում է, թե ով է նա և ինչ իրավունքով է նա պահանջում այն: Նա պատասխանում է, թե կարող է իր վկայականը ցույց չտա: Լենան պատասխանում է իրեն, որ քանի որ նա չի ներկայանում, ապա ինքն էլ կարող է ցույց չտալ իր վկայականը:Մի քանի րոպե անց նա վերադառնում է ինչ-որ մարդկանց հետ, այդ պահին իրենցից մեկը կոպտորեն բռնում Լենայի ձեռքը և սկսում է քաշել Լենայի ձեռքից:Այդ պահին կնոջս նյարդերը չեն դիմանում և նա սկսում է լացել վիրավորված, վրդովված, չհասկացված, այն պատճառով թե ինչու են նրան մեղադրում, թե ինչու այն մարդիկ, ում հետ կարծես թե նույն նպատակներն են հետապնդում, պահանջում են, որ հեռանամ ցույցի վայրից:Այն պահին, երբ նա հասկացավ, որ այդ անձնավորությունն այնքան է լարված, որ հեշտությամբ կարող է իրեն գետնին հավասարեցնել, Լենան հեռացավոստիկանության և բարիկադների տարածքից:Սակայն, կինս մնաց Բաղրամյանում: Նա գնաց իր ընկերների մոտ և պատմեց կատարվածի մասին, այնուհետնշնորհակալություն հայտնում աջակցության համար: Կատարվածից 40րոպե անց ես ինքս զանգահարեցի Լենային (այդ պահի դրությամբ ես արդեն տանն էի),հարցրեցի, թե ինչ է տեղի ունենում, քանի որ հենց նոր իրեն տեսա նորություններում և ամբողջ facebook-ով մեկ մարդիկ կիսվում են այն նյութերով, որտեղ կնոջս անվանում են ուկրաինական սադրիչ:Անհնար է նկարագրել, թե որքան վիրավորական էր դա:

Մոտ մեկ ժամ անց Լենան եկավ տուն: Եվ արդեն տանը ես սկսեցի թարգմանել իր համար այն մեկնաբանությունները, որոնք զրառվել էին համացանցում:
Ոստիկանության պետի խորհրդական Նարեկ Մալյանը հրապարակեց իր Ֆեյսբուքյան էջի վրա 1in-ի սյուժեի մի հղում, որտեղ տեսագրված էր Լենայի զրույցը Թևան Պողոսյանի հետ, այն մեկնաբանություններով, որ նա ուկրաինական սադրիչ է:Հաջորդիվ, մեկնաբանություններում այս անձնավորությունը, որը զբաղեցնում ՀՀ Ոստիկանության ոչ վերջին տեղը, թույլ էր տալիս իր ընկերներից այնպիսի մեկնաբանություններ, որոնք նաև ներառում էին անուղղակի սպառնալիքներ իմ կնոջ հասցեին, օրինակ՝ մեկնաբանություն ոմն Արմենից, որը կոչ էր անում կնոջս քաշ տալ և բռնաբարել ծառի տակ:Այդ բոլոր մենկաբանությունների սքրինշոթերը կից ներկայացված են:
Այդ տեսանյութը սկսեց շատ արագ տարածվել՝ մեկնաբանություններով, թե նա ուկրաինական սադրիչ է: Անկախ պատգամավոր Էդմոն Մարուքյանը ավելի հեռու գնաց և իր մեկնաբանություններում պտնդում էր, թե նա նաև հարբած է եղել: Հաջորդ օրվա կեսը անցավ կնորջս համար ընկերների զանգերին պատասխանելով, թե որտեղից են այդ անհեթեթությունները և այլն:Երեկոյան մենք կրկին Բաղրամյանում էինք: Բոլոր ծանոթները դիմավորում էին մեզ ծիծաղով, իսկ անծանոթները մոտենում էին և բարևում և ասում, որ տեսել են նյութը և հարցազրույցը Հունան Պողոսյանի հետ, որին հաջորդում է մի սյուժե, որտեղ ասվում է, որ Լենան սադրիչ է Ուկրաինայից: Մեր ընկերներից մեկի՝ Տիգրանի հետ, մենք գտանք Էդմոն Մարուքյանին և խնդրեցինք, որպեսզի նա դուրս գա զրուցի և բացատրի, թե ինչ հիմունքների վրա է նա մեղադրում կնոջս որպեսՈւկրաինացի սադրիչ:Էդմոն Մարուքյանը հրաժարվեց խոսել տեսախցիկի առկայությամբ,քանզի կինս ցանկանում էր խոսակցությունը տեսագրել հեռախոսի վրա:Առանց տեսախցիկի նա կրկին սկսեց բառային հարձակումները, խոսում էր այն մասին, որ Լենան իրավունք չունի գտնվել ցույցին(նման իրավունք ամրագրված է օրենքովhttp://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=90902) , որ նա իրավունք չունի խոսել ոստիկանության հետ:Ասում էր, որ նա մեծ մասնագետ է մարդու իրավունքների ոլորտում և բազմաթիվ դասընթացներ է իրականացրել, սակայն, մեր խնդրանքին ցույց տալ օրենքի կետը, որին նա հղում է անում, նա հրաժարվեց պատասխանել և փոխում էր թեման:Կինս չէր տեսնում իմաստ շարունակել խոսակցությունը մի մարդու հետ, որը շարունակում է ստել և հեռացավ:Նույն երեկոյան ես զրուցեցի այն երիտասարդի հետ, որը կնոջիցս պահանջում էր վկայական և ագրեսիվորեն խոսել էր իր հետ:Պարզվեց, որ պատգամավորներից մեկը ասել է իրեն, որ Լենան վտանգավոր սադրիչ է և նրան պետք է հեռացնել ցույցից:
Հաջորդ օրը Լենան հերքման հարցազրույց տվեց Civilnet-ին:
Նույն օրը պարոն Նարեկ Մալյանը հրապարակեց մի նոր հոդված, որտեղ նոր զրպարտանք է ուղղում Լենայի հասցեին, մեղադրելով, որ նա առնչություն ունի Սիրիայում, Ուկրաինայում, Վրաստանում անկարգությունների հետ և իբր թե վերապատրաստվել է Թուրքիայի ճամբարներում:
Ի դեպ, նա հրապարակել է նկարներ իմ սեփական ֆեյսբուքյան էջից, նշելով կնոջս անունը, մեղադրելով նաև Ռուսաստանի նկատմամբ ատելության մեջ:Նա պնդում էր, որ Լենան սեքս էր առաջարկումԲաղրամյանի վրա գտնվող ոստիկաններին:Մի քանի նուրբություններ տրամադրող կայքեր տարածեցին այդ տեղեկությունը:Իրենց հերթին տարբեր մարդիկ ֆեյսբուքում սկսեցին կիսվել տարբեր հղումներով:Այսպես, մի քանի ժամ հետո հարյուրավոր, եթե ոչ հազարավոր մարդիկ արդեն դեմքով էին ճանաչում կնոջս և շատերը լուրջ էին ընդունել այս տեղեկությունը:

Նրան սկսեցին գրել տասնյակ մարդիկ, որոնցից մի մասը առաջարկում էր սաունա գնալ միասին, մյուս մասը՝ չքվել: Փողոցներով անցնելիս, նրան ճանաչում էին մարդիկ, ոմանք, առանց ամաչելու, գոռում էին «սադրիչը», բայց եղել են նաև մարդիկ, որոնք մոտենում էին, սեղմում ձեռքը և շնորհակալություն հայտնում:
Մենք ցանկանում ենք, որպեսզի այն մարդիկ, որոնք մեղադրանքներ են հարուցել իր նկատմամբ, այն հարցում, թե նա սադրիչ է և տարբեր երկրներում անկարգությունների հետ կապ ունի, կրեն պատասխանատվություն իրենց զրպարտանքների համար:
Մենք ունենք երկու երեխա, կինս բնակվում է այս երկրում, և չնայած, պաշտոնապես Ռուսաստանի քաղաքցի է, իրեն համարում է այս երկրի լիիրավ քաղաքացի:Նա արդեն 12 տարի է կապված այս երկրի հետ և առաջին հերթին վիրավորական է, որ մարդիկ և առավելևս պատգամավորները որոնք պնդում էին, որ իրենք ժողովրդի կողքին են և չեն թույլ տա բռնություն, միևնույն ժամանակ իրականացնում էին ոստիկանների հետ համատեղ գործունեություն, դուրս էին մղում բարիկադների տարածքից իրենց խանգարող և մեղադրանքների հեշտ թիրախ դարձած մարդկանց:

Այս դիմումին կից ներկայացված են փաստաթղթեր՝ այն նյութերի հղումներ, որոնք տեղ են գտել համացանցում կնոջս մասին: Նարեկ Մալյանի և Էդմոն Մարուքյանի էջերից սքրինշոթեր, Թևան Պողոսյանի հետ զրույցի մի մաս, որի հիման վրա բոլորը սկսեցին պնդել, թե նա ուկրաինացի սադրիչ է, ինչպես նաև Հունան Պողոսյանի հետ հարցազրույցից մի հատված, որտեղ նա հաստատում է, որ Լենան ուկրաինացի է, որը ժամանել է Երևան՝ սադրանքներ իրականացնելու նպատակով:

Իմ կինը՝ Օվսյաննիկովա Ելենա Իգորի, ծնվել է Ռուսաստանում, Մոսկվայում, որտեղ անցկացրել իր ողջ կյանքը, մինչև սույն թվականի հունվար ամիս, երբ մենք որոշեցինք տեղափոխվել Հայաստան, մեր երեխաների հետ:

1. http://lurer.com/?p=191053&l=am
2. http://blog.1in.am/blog/147606.html?fb_action_ids=1093830917311805&fb_action_types=og.comments
3. http://a1.am/hy/news-30062015-1945-0
4. http://blog.times.am/?p=131684&l=am

Պետրոսյան Հարությունի

06.07.2015թ.